ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ը

2009 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 29-ԻՆ ԵՎ 2009 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 30-ԻՆ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ՝ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՐԺՈՒՅԹԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՄԻՋԵՎ 202.400 ՄԼՆ ՀԱՏՈՒԿ ՓՈԽԱՌՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻՆ ՀԱՄԱՐԺԵՔ ԳՈՒՄԱՐԻ ՉԱՓՈՎ ՎԱՐԿ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՆԱՄԱԿՆԵՐԻ ՓՈԽԱՆԱԿՄԱՆ ՁԵՎՈՎ ԿՆՔՎԱԾ ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐՈՒՄ ԱՄՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ

Քաղ. Երեւան 8 հուլիսի 2009թ.

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը՝ կազմով. Գ. Հարությունյանի (նախագահող), Կ. Բալայանի, Հ. Դանիելյանի (զեկուցող), Ֆ. Թոխյանի, Վ. Հովհաննիսյանի, Հ. Նազարյանի, Ռ. Պապայանի, Վ. Պողոսյանի,

մասնակցությամբ՝ Հանրապետության Նախագահի պաշտոնական ներկայացուցիչ՝ ՀՀ ֆինանսների նախարարի տեղակալ Վ. Արամյանի,

համաձայն Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100 հոդվածի 2-րդ կետի, 101 հոդվածի 1-ին կետի, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 25, 38 եւ 72 հոդվածների,

դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «2009 թվականի հունիսի 29-ին եւ 2009 թվականի հունիսի 30-ին ստորագրված՝ «Հայաստանի Հանրապետության կառավարության եւ Արժույթի միջազգային հիմնադրամի միջեւ 202.400 մլն հատուկ փոխառության իրավունքին համարժեք գումարի չափով վարկ տրամադրելու մասին» նամակների փոխանակման ձեւով կնքված համաձայնագրում ամրագրված պարտավորությունների՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Գործի քննության առիթը Հանրապետության Նախագահի դիմումն է՝ մուտքագրված 2009 թվականի հուլիսի 2-ին:

Ուսումնասիրելով սույն գործով զեկուցողի հաղորդումը, Հանրապետության Նախագահի պաշտոնական ներկայացուցչի բացատրությունները, հետազոտելով համաձայնագիրը եւ գործում առկա մյուս փաստաթղթերը, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Զ Ե Ց.**

1. Համաձայնագիրը կազմվել է ՀՀ ֆինանսների նախարարի կողմից 2009 թվականի հունիսի 29-ին ստորագրված նամակի եւ Արժույթի միջազգային հիմնադրամի ներկայացուցչի կողմից 2009 թվականի հունիսի 30-ին ստորագրված պատասխան նամակի փոխանակման ձեւով:

2. Համաձայնագրի նպատակն է Հայաստանի Հանրապետության 2009-2010թթ. բյուջեների ֆինանսավորումը, որով նախատեսվում է տրամադրել 202.400 մլն փոխառության հատուկ իրավունքին համարժեք գումարի չափով վարկ: Վարկի միջոցները ՀՀ-ին տրամադրվում են երկու հատկացումներով՝ 2009թ. հատկացումը կկազմի 102.668 մլն ՀՓԻ-ին համարժեք գումար եւ կկատարվի մեկ փոխանցումով, իսկ 2010թ.՝ 99.732 մլն ՀՓԻ-ին համարժեք գումար եւ կկատարվի եռամսյակային կտրվածքով՝ չորս հավասար փոխանցումներով:

3. Համաձայնագրով Հայաստանի Հանրապետությունը պարտավորվում է վարկի մարումը կատարել 8 եռամսյակային հատկացումների միջոցով՝ սկսած յուրաքանչյուր ստացմանը հաջորդող 3 1/4 տարվանից՝ ավարտելով այն 5 տարի անց, իսկ տոկոսավճարները վճարել եռամսյակային կտրվածքով՝ յուրաքանչյուր եռամսյակի առաջին օրը:

4. Համաձայնագրի համաձայն վարկի տոկոսավճարը կազմում է բազիսային տոկոսադրույքի, հավելավճարի, ծառայության վճարի եւ տարեկան պարտավճարի գումարը: Բազիսային տոկոսադրույքը ներկայումս կազմում է 1,38%: Հավելավճարը ՀՀ քվոտայի 300%-ը գերազանցող վարկի դեպքում կազմում է 2%, 3 տարի անց՝ տարեկան լրացուցիչ 1%: Ծառայության վճարը կազմում է վարկային միջոցներից յուրաքանչյուր մասհանման համար 0,5%: Տարեկան պարտավճարը կազմում է՝ 0,15%՝ քվոտայի 200%-ը գերազանցող գումարի դեպքում, 0,3%՝ քվոտայի 200-1000%-ի գումարի դեպքում եւ 0,6%՝ քվոտայի 1000%-ը գերազանցող գումարի դեպքում:

5. Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում ՀՀ-ի կողմից դրա ուժի մեջ մտնելու համար անհրաժեշտ համապատասխան ներպետական ընթացակարգերի կատարման մասին Արժույթի միջազգային հիմնադրամին ծանուցելու օրվանից:

Ելնելով գործի քննության արդյունքներից եւ ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100 հոդվածի 2-րդ կետով, 102 հոդվածի առաջին եւ չորրորդ մասերով, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 63 եւ 64 հոդվածներով, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց.**

1. 2009 թվականի հունիսի 29-ին եւ 2009 թվականի հունիսի 30-ին ստորագրված՝ «Հայաստանի Հանրապետության կառավարության եւ Արժույթի միջազգային հիմնադրամի միջեւ 202.400 մլն հատուկ փոխառության իրավունքին համարժեք գումարի չափով վարկ տրամադրելու մասին» նամակների փոխանակման ձեւով կնքված համաձայնագրում ամրագրված պարտավորությունները համապատասխանում են Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը:

2. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 102 հոդվածի երկրորդ մասի համաձայն սույն որոշումը վերջնական է եւ ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ՆԱԽԱԳԱՀՈՂ **Գ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

8 հուլիսի 2009 թվականի
ՍԴՈ-812